




ՈՂ-ՅԱՐԱՆՈՒԱՆԷԿԱՆ ԵՒ ԱՆԿԱՆ ԿՐԾՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԻ

AVEDARANI TSAIN

AN ARMENIAN RELIGIOUS MONTHLY

Բ. ՏԱՐԻ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1940

ԹԻԻ 9



Փառին հանդէպ բողոք եղեմ (Ծնունդ. 24. 17, 18)

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ ԿՐՕՆԱԿԱՆ ԱԾԽԱՐՅԷ

Տարրոյին հոգին.— 1936 ին փաստաբան Դարեան Տարրո քեպէս սկեպտիկ, համաձայնութեան կու գայ Գլոս Եօպլ աւանդով հոգեբան-կախարդի մը հետ որ իր մահեկն ետքը իր հոգիին հետ կարենայ յարաբերիլ որ տեղի պիտի ունենար հետեւեալ ձևով.— Իր մահուան տարեդարձին Գլոս Եօպլ պիտի երթար Շիպսիօյի Ճեֆըն Փարֆ Հէկոն կառնուրը որ Տարրոյի պիտի փայրէ եր առանձնականութիւն ուր Եօպլ պիտի հրաշքեր Տարրոյի հոգին ինքզինքը յայտնէր։ Եթէ հոգին ներկայ է ինքզինքը պիտի յայտնէր պարզապէս շարժելով բաց երգարանը զոր Գլոս Եօպլ իր ձեռքին մէջ բռնած պիտի ըլլար։

Տարրո կը մեռնէ 1938 ին, մահուան առաջին տարեդարձին փորձը կատարուեցաւ առաջին անգամ ըրալով։ Ոչ մէկ տղիւնէ։ Այս տարի իսկի մը ամիս առաջ երկրորդ տարեդարձի տոբիւ Եօպլ կրկին փորձեց։ Ան հրաշքեց ընտանիքին անդամները — հանգուցեալին կիներ եւ իր տղան — խոնարհեցնելու իրենց զուգաները եւ իրեն հետ կրկնելու Տիրուական Աղօթքը։ Յետոյ խալ մը յառաջանալով կը բանայ երգարանը եւ իր դէմքը երկինքը ուղղելով հանդիսանոր կերպով կ'ըսէ. «Դարեան Տարրո, անա ես հոս կը գտնուիմ քեզի հետ մեր համաձայնութիւնը ի գործ դնելու, եթէ ինքզինքը կրնաս յայտնել, յայտնէ այժմ»։ Աւելը կ'ապաստին, լուռ, աչքերին յառած բաց երգարանին։ Անձրեւի կաթիլներ մեղմորեն կ'իջնային իր բաց էջերուն վրայ, սակայն բաց էջերը կը մնային անշարժ... կը գրէ Աւերիկեան քերթ մը «Փէքն Ֆայնէր»։

Տ կը կարդանք որ Բորիայի մէջ եկեղեցական պաշտօնականներուն հրահանգ տրուած է, ըս որուն կիրակի առաւօտեան պաշտօնակներէն առաջ ժողովուրդը պիտի է կատարէ հետեւեալ բաները.— 1. Երեսը դարձնել դիպի Թոմիօ եւ խոնարհիլ յարգալի։ 2. Զարմանակուն դրօշակը շարժել «պանգա, պանգա» աղա-

ղակելով։ 3. Ոտի կայնիլ եւ ուխտադիր ըրալ երբ պաշտօնական կարգա հետեւեալը. «Մենք հաւատարիմ ճարտնցի հարստիներ ենք եւ Ն. Վեհափառութեան Զարդնի Կայսեր հաւատարմութիւն կ'ուխտենք։ Մենք ամեն հոգ պիտի սանկնք բարի մարդիկ եւ մարմնով զօրաւոր ըրալու»։

Տ Ըս Աւերիկեան Սք. Գրքի ընկերութեան յայտարարութեան, 1939 տարուան մէջ 13 նոր շէգուններու քարգնանում է Աստուածաշունչը, որով քարգնանում շէգուններու քիւլը կը բարձրանայ 1021 ի։ Հարկ չկայ ըսելու քի Սք. Գիրքը ամբողջութեամբ քարգնանում չէ այդքան շէգուններու, այլ անոնցէ մեծ մասը՝ մասնակի քարգնանութիւններ են։

Տ Երեսուրդ ուրք երկիրներ ներկայացում են Վասիլիանի մօտ։ Գրանտայի պատմիրակութիւնը կը բարկանայ 7 անդամներէ, Լեհաստան ունէր 6 պատմիրակ, Սլաւիա եւ Զիլի ունին 5 անգամ պատմիրակներ, միւսները աւելի նուազ։ Երիցագոյն դեպքանը Վասիլիանի մօտ գերմանական է, քան տարիէ ի վեր կը վարէ այդ պաշտօնը։

Տ Մեծագոյն Նիւ Եորքի Եկեղեցական Դաշնակցութիւնը մօտեւ հաւասարակամ է զրոյի մը որ զգալաւոր քիւլը կու տայ Նիւ Եորք քաղաքի մասին։ Այս մեծ ուսանիմ մէջ կան 7 հարիւր հազար անգործներ, 5 հարիւր հազար ընտանիքներ կ'ապրին ստորին քաղաքական մէջ (slums)։ Մէկ միլիոն հոգիներ կը առաջին վեներական ամիսէ, մէկ միլիոն ձեռքակալածներ կան, 7 հազար մանուկներ ձեռքով ծնողիկն չհաւած են եւ դասի մէջ կը գտնուին։ 1163 անհետապանութիւն կատարուած է, մէկ միլիոն երկու հարիւր հազար մանուկներ կան որոնք ո'ր եւ է կրօնական կրթութիւն մը չեն ստանար։ Հինգ միլիոն մարդիկ կան որոնք որ եւ է եկեղեցիի մը հետ կապակցութիւն չունին։

ԱՒԵՏԱՐԱՆԻ ՁԱՅՆ

ՈՉ-ՅԱՐԱՆՈՒԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԿԱՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

AVEDARANI TSAIN

AN ARMENIAN RELIGIOUS MONTHLY

Արամատեր՝ Խ. Թ. ՍԱՐԵԱՆ —:— Propr. Rev. K. T. SARIAN

Խոսքագիրներ

Վ. Խ. Խ. Թ. ՍԱՐԵԱՆ

Վ. Խ. Թ. ԶՈՏՈՐ Ե. ՏԱՂԼԵԱՆ

Պ. Լ. Ե. Թ. ՈՒՄՍԵԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1940

ԹԻԻ 9

“ԲԱՐԻ ԳՈՐԾ ՄԸ”

Մենք խօսեցանք նախորդ բիւիւն մէջ «Արդարութիւն մը որ հաւաստի է»
նիւթին շուրջ ի բաց բողոքով գործը արդարացումի խնդրոյն մէջ, որ է շնորհ-
քով եւ ոչ գործով: Ասիկա Աւետարանին բացարձակ վարդապետութիւնն է, որ
վեր է ամէն տարակոյտէ եւ վէն չվերցնէ: Մենք մեր փրկութեան համար
պէ՛ս չունինք գործելու, փրկութեան այդ գործը կատարուած է խաչին վրայ
մի անգամ ընդ միշտ, մեզի կը մնայ հաւաստի ձեռքով զայն ընդունիլ եւ մե-
զի համար սեփականացնել: Այդ կը նշանակէ քե երբ Աստուծոյս փրկու-
թիւն մը պատրաստուած է, մարդիկ պէ՛ս չունին դարձնելու ուրիշ մը իրենց
խկն՝ ձեռքերովը:

«Բարի գործ»ի գաղափարը հա՛րկ է ուրեմն տարածել: Ո՛չ անուշ, ան-
փրկութեան համար անոր պէ՛ս չունինք, ասիկայն փրկութեան մէջ անհրաժեշտ է
անհիկա: Արդ, իւրաքանչիւր Բիւստոնեայի մը համար պէ՛ս չէ դադարած ըլլայ
«բարի գործ»ը իր կարեւորութենէն, մանաւանդ փրկուած մը պէ՛ս չէ խաչի
այդ բառէն, անոր սխալ գործածութեան համար: Կան «բարի գործ»եր, որոնք
պէ՛ս է տեսնուին ամէն Բիւստոնեայի քով, որ իրապէս հոգով, սրտով փարած
է Յիսուսի: Մեր Տէրը «բարի գործ»ի մասին (սխալաբանութեան) չէր, հակա-
ռակ որ իր դարուն մէջ շատեր կ'ակնկալէին իրենց փրկութիւնը գործներէն:
Ան չարհամարհեց «բարի գործ»ը երբ ուղիղ եւ մաքուր բարեպաշտութեամբ կատար-
ուեցաւ անհիկա: Այսօր միեւնոյնը նմարիս է մեզի համար ալ: Հակառակ որ
մեր շուրջը բարեգործութեամբ երկինքը շարժի՝ շատ ժողովուրդականացած ու-
սուցում մըն է, բայց եւ այնպէս բարեգործութիւնը իր տեղը պէ՛ս է ունենայ
մեր կեանքի մէջ Բիւստոնեայի պահանջած ձեռքով:

Որ եւ է գործ յարի է երբ Յիսուսի համար է: Մարկոս Ժ. 3-9 հա-
մարներուն մէջ նշանակալից դէպք մը կը պատմուի: Այնտեղ մեր Տէրը պատ-
մութեան հերոսութիւնը կը գովէ ըսելով. «Ասիկա յարի գործ մը գործեց ինծի»: Այս
կէտք շատ կարեւոր է: Մեր բոլոր գործերը պէ՛ս է ըլլան բարի, անտար-
կոյս չար գործը Բիւստոնեայի մը անուան եւ կոչումին անվայել է: Յետոյ
պէ՛ս է ըլլայ Բիւստոնեայի համար: Յաճախ այս կէտք աչքէ կը վրիպի եւ մեր
բարի գործերը կ'ընենք մարդոց համար եւ մեր անունով: Իսկ մեզմէ պա-

հանջուածք այս է «ընել ամեն ինչ Քրիստոսի անունով եւ իր փառքին համար»:

Բարեգործութեան մէջ կարեւոր է նաեւ շարժառիթը: Բարեգործութիւնը երբ մարդոց երեւնալու նպատակաւ կատարուած է դասապարտելի է: Մուռ շաժառիթով ոչ թէ միայն բարեբարել, այլ մինչեւ իսկ ծովապահել եւ աւփօքել Տերոջը առջեւ պիղծ կը նկատուին: Երբ յիշեալ կիներ կատարեց այդ բարի գործը, մարդոցմէ գովեստ ստանալու շարժառիթով եւ անուն վասակելու համար չէր, այլ միայն ու միայն Տէրը հանեցնելու համար էր: Նկատառութեան արժանի կէտ մըն էր մանաւանդ այդ պարագան թէ՛ ներկայ գտնուող *մարդոց կալիքին հսկողակ* կատարեց այդ «բարի գործ»ը: Ներկաները ասիկա ոչ թէ բարի գործ, այլ յումպէս վասնուած, անօգուտ, մինչեւ իսկ վնասակար գործ գտան: Իսկ Տէրը կ'ըսէ. յումպէս վասնուած չըլլար բան մը եթէ ինծի համար է ասիկա, բնականապէս, անիկա յաւիտեանս յիշատակուելիք բարի գործ մըն է: «Ճումարիս կ'ըսեմ ձեզի թէ բոլոր աշխարհի մէջ ուր որ այս Աւետարանը փարօղի, ա՛նոր քաճն ալ պիտի խօսուի՝ իրեն յիշատակ ըլլալու համար»: Պիտի տարածուէր այդ անուշ հոտը աշխարհի ամեն կողմը, բոլոր դարերու մէջ: Մարդոց անունով եւ մարդոց երեւնալու համար կատարուած բարեգործութիւնները պիտի անհետանան ժամանակի հետ միասին եւ պիտի դադրին յիշատակելի ըլլալէ:

Բարի գործը պէտք է յիշի տրտման: Երբ այդ օրհնեալ կիներ կը բափէր այդ պատուական նարդոսի անուշահոտ եղբ, այդ եղին հետ կը հոսէր իր սիրտը եւ իր բոլորանուէր սէրը Յիսուսի համար: Մարիամ ասկէ աւելի տարբեր ձեւով մը չէր կրնար ի յայտ բերել իր անգուզական սէրը: Նէ տուաւ ամենաբանկազինը: Շիւով միասին կոտրեց եւ բափեց իր սիրտն ալ Անոր առջեւ: Ասիկա գերագոյն արտայայտութիւնն էր սիրոյն, զոր կը սնուցանէր իր սրտին մէջ Յիսուսի հանդէպ: Ուստի երբ գործ մը արդիւնին է այսպիսի գերադրական սիրոյն եւ ան ալ Յիսուսի հանդէպ, ահա այս է Յիսուսի պահանջած «բարի գործ»ը:

Ինչ որ կարեւոր է՝ ընել Յիսուսի սիրոյն: Յիսուս սիրոյ այս հոյակապ արարքին մէջ կը տեսնէ ուրիշ իմաստ մը զոր ուրիշ մանկանացուներ կարող չէին նշմարել: Յիսուսի յաղթական կեանքին փառաւոր վախճանին գեղեցիկ խորհրդանշանն էր ասիկա: Իր մարմինը այսպէս պիտի բեկանէր եւ անկէ դուրս պիտի գար յաւիտեական կեանքի անուշ բուրում մը բոլոր դարերու մարդոց համար, որոնք պիտի հաւատային իրեն: Կրնայ ըլլալ որ Մարիամ իսկ այսօր իմաստ մը չկրցաւ տեսնել իր իսկ արարքին մէջ, բայց ի՞նչ փոքր, Տէրը այդպէս մեկնեց եւ մեք պէտք է ընդունինք:

Մեր Տէրը կ'ըսէ. «Ասիկա ինչ որ ունէր՝ քաւ», այլ խօսումով, ի՞նչ որ կրնար ընել՝ քաւ: Ասկէ աւելին չէր կրնար տալ, չէր կրնար ընել, չէր պահանջուէր ալ: Իր քաւը յաւագոյնն էր, իր տուածը ամենալաւն էր: Ի՞ճալ սէր մը, անվերապահ հուրում մը, գերագոյն զոհողութիւն մըն էր կնկան այդ բարի գործը: Ահա թէ ի՞նչ տեսակ բարի գործ մը կը պահանջուի իւրաքանչիւր նշմարիտ քրիստոնեայէն:

Երանի թէ մեզի համար ալ Տէրը կարենար թել. «Ինչ որ ունէր՝ քաւ, ի՞նչ որ կրնար տալ՝ տուաւ, ինչ որ կրնար զոհել՝ զոհեց, որքան որ կրնար սիրել՝ սիրեց, բարի գործ մը *գործեց ինծի:*

Խ. Թ. Ս.

ԱՍՏՈՒԱԾ ԵՒ ԱՊՍՏԱՄԲ ԱՇԽԱՐՀ ՄԸ



Երեք հազար տարիներ տառջ, Յու-
նաստանի մէջ կ'ապրէր մեծ և անուանի
բանաստեղծ մը, զինքը կոչած են բա-
նաստեղծներուն հայրը և իշխանը։ Ա-
նոր անունն էր Հոմերոս, որուն կեան-
քին մասին չառ քիչ բան գիտենք։ Իր
երկու մեծ գլուխ - գործոց երկերն են
“Lliad և Odyssey”։ Այս նշանաւոր
բանաստեղծին անունը ծանօթ է բո-
լանգրակ աշխարհի մէջ, սակայն անոր
գրութիւնները մոռցուած են այսօր և
անունները չեն յիշուիր գրեթէ։ Անոր
ժամանակից կ'ապրէր թագաւոր մը
Դաւիթ անուանով, ան ալ գրեց չառ
գեղեցիկ բանաստեղծական հատորներ,
փոռաբանութեան երգեր, պաշտո-
մունքի և աղօթքի ներշնչեալ հառ-
ուածներ։ Յիշեալ թագաւորը Իսրայէ-
լի թագաւոր մըն էր։ Դաւիթի բա-
նաստեղծական գրութիւնները իր
անձնական գաղափարները չէին, այլ
աստուածային զօրութիւն և ձեռք մը
կը հսկէր իր խորհուրդներուն և զը-
րիչին վրայ։ Հետեւաբար Դաւիթ
թագաւորին Սաղմոսները անմահ են,
անոնք երբեք չեն մոռցուած և ա՛լ
չպիտի մոռցուին։ Տարուէ տարի անոր
Սաղմոսները կը կարգադրուին միլիոն-
ներու կողմէ, անոնք կը գոհացնեն և
կը յագեցնեն անօթի ու ծարու հոգի-
ները՝ ամէն ազգէ ու ցեղէ և լեզուներէ,
որոնք ծարուի են արգարութեան։
Անթիւ միլիոններ որոնք տառապան-
քի, թշուառութեան և նեղութեան
հոգէն կ'անցնին, անոնք անոր ըն-
թերցումովը հանգստացած են, և ի-
րենց հաւատքը ու վստահութիւնը առ
Աստուած զօրացած է, Հովելուեա...

Սակայն ուրիշ կէտ մը կայ որ

պէտք է նկատի տանք, այս սաղ-
մոսներուն մեծ մասը մարգարէական
են, այսինքն ապագային կատարուե-
լիք գէպերը կը մատնանեն։ Դա-
ւիթ թագաւոր մըն էր, միեւնոյն
ասին մարգարէ մը (Գործք 2. 30)։
Իր մարգարէական գրիչը նկարագրեց
Քրիստոսի չարչարանքները և իր յա-
ւանական փառքն ու թագաւորու-
թիւնը։ Աստուծոյ Հոգին Դաւիթ
մարգարէին կը յայտնէր ինչ որ պիտի
պատահէր ապագային Իսրայէլի ժողո-
վուրդին և հեթանոս ազգերուն։

Երկրորդ Սաղմոսը ամբողջու-
թեամբ այս մեծ մարգարէութեանց
մին է, այս մարգարէութիւնները ոչ
միայն սաղմոսներու մէջ այլ բոլոր
Սբ. Գիրքի մէջ ալ գրուած են, ու-
րոնք արագօրէն կատարուելու վրայ
են։ Ազգերը խռովութեան մէջ են
կ'ըսէ սաղմոսերգուն, անոնք խոր-
հուրդ կ'ընեն, երկրի թագաւորները,
իշխաններն ու մեծամեծները կը միա-
րանին Տէրոջը դէմ ու Անոր Օծեալին
դէմ, ըսելով. «Կոտորեք Անոր կապի-
րը, ու մեզմէ մէկդի ընենք Անոր լու-
ծը» (Սաղմ. 2. 2-3)։ Այո՛, անոնք մէկ
նպատակ ունին, կ'ուզեն Սաստաւածո-
յին Օրէնքները ռանակոխ ընել, ա-
պստամբիլ և ուրանալ իրենց Արա-
րիչն ու Փրկիչը։ Այս օրուան ազգե-
րու և կառավարութիւններու գիրքը,
յեղափոխութեան և ապստամբութեան
հոգին՝ մարգարէական պատկերն է՝
Սաղմոսի 2րդ գլխուն։

Ամբողջ երկինք այս աշխարհը կը
գիտէ, Ան որ յաւիտենական Աթոռին
վրայ նստած է, լուռ կը կեցայ, մինչ
Իրեն գէմ կը խօսին ու կը գրեն և

կը գործեն: Սակայն նա մինչեւ ե՞րբ պիտի լռէ արդեօք, մինչեւ ե՞րբ իր Աթոռէն չելլէ ու վերջ առայ ներկայ ընդհանուր խռովութեան, թշուառութեան և պատերազմին, ու հաստատէ իր յաւիտենական տնտեսան թագաւորութիւնը՝ որուն հիմը արդարութիւն է և ժողովրդակրօնները բարձրելոյն սուրբերը՝ Յիսուս Քրիստոսով:

Ան վերէն կը դիտէ ազգերու այս խռովարար վիճակը, «ազգերը՝ որոնք զոյլէն կաթած կաթիլի պէս են, ու կշիռքի մէջի մանր փոշիին պէս կը սեպուին» կ'ըսէ Աստուծոյ Խօսքը (Ես. 40. 15):

Արդեօք ամենակարող և ամենագէտ Աստուածը իր ծրագրերնէրը ոչ-խաբհի սկիզբէն տառջ պատարասած չէ՞ր: Այո՛, Ան գիտէր ինչ որ պիտի պատահէր և պիտի պատահէր ահաւրին: Իր խօսքին (Աբ. Գրքին) մէջ ամէն բան որոշ է: Ուրեմն ինչո՞ւ այս սփ մը ահարարութիւնները՝ որոնք կանանչ խոտի և շագիի նմանցուած են, իրեն դէմ կը հակառակին և կ'անարգեն զինքը: Ինչո՞ւ կը լռէ: Ահա տեսարանը կը փոխուի... Երկինքի լուսնիւնը կը վերջանայ, Ան այլեւս մարդոց գիւմարութեանը չի պիտի լռէ և պիտի չթաղարէ որ մարդ իր Օրէնքները զանց ընէ, իր Միածին Որդին մերժէ: Ան մարդուն հպարտութեանը և անհուատարմութեանը վերջ պիտի տայ: Ան նորէն կը խօսի, սակայն ոչ թէ քաղցրութեան և սիրոյ ձայնով, ոչ, այլ իր բարկութեամբը:

Աստուած մեկը տնօրինած է որպէս Թագաւոր և Դատասար, իշխանութիւնը Անոր ուսին վրայ պիտի ըլլայ և ինք իր Փառաց Աթոռին վրայ նստած արդարութեամբ պիտի դատէ բոլոր ազգերը: Եւ ինք ազէտ չենք գալիք այս մեծ թագաւորին

ա՛: ճնաւորութեանը մասին: Աստուած ինքը կը յայտարարէ թէ՛ «Դուք իմ Որդիս ես» յետոյ այս ազդարարութեանը կը յաջորդէ «Ճանչցէք Որդիս, երկրպագութիւն ըրէք Անոր...»:

Ուշագրաւ հարցում մը. «Ինչո՞ւ»:

Այսպէս կը կտրուի Բ. Սաղմոս ատօջին համարին մէջ, «Ինչո՞ւ հեթանոսները խոտովութիւն կ'ընեն ու ժողովուրդները պարսպ բան կը մտածեն»: Ինչո՞ւ այսօր աշխարհի ներկայ պայմանները կ'ապաւնան, ինչո՞ւ այս ճգնաժամային վիճակը, ինչո՞ւ այս կրկնապատկուող խոտովութիւնները, ինչո՞ւ ազգերու իրարանցումները, ինչո՞ւ այս բոլոր տնօրէն, ստրատիելի կացութիւնը, տնօրէն պահութիւններու և սծրագործութիւններու զանազան կերպերը, ո՞ր ինչո՞ւ միլիոններ այսօր կը համարձակին խենդօրէն պռաւլու «Աստուած չիկայ», վերջապէս ինչո՞ւ ազգերու այս աննախընթաց անհուոր խռովութիւնները և անհուշտ վիճակը՝ որուն առջեւ բովանդակ աշխարհ կը սարսափի: Այսօր միլիոններ կը ծախսուին ամէն օր ռազմանիւթերու համար, երբ անդին միլիոններ անգործ, անօթի և թշուառ վիճակի մէջ կը հառաչեն: Ուրեմն ինչո՞ւ այս բոլորը կը պատահին: — Դիտէ՛ք մեղքը պատասխանատու է վերոյիշեալ զոքարատութեանց: Ներկայ ցաւալի կացութիւնը երբեք տեղի պիտի չունենար, մարդիկ զոքարատութենէ զոքարատութիւն պիտի չզոյրուէին եթէ մեղքէ հետեւ մնային: Իրենց ամենակալ Արարչին դէմ պիտի չհամարձակէին եթէ Աստուծոյ խօսքին ահանջ տային: Աստուած իր մեծ ոգորմութեամբը մարդկութեան այս անկումին, մեղքին և զոքարատութեան համար զեղ և դարման մը պատրաստած է: Եւ կարելի ըրած է որ ամէն

մարդ Իրեն գտնույն, Ան կարող է և կը հաճի մարդուն հոգեւոր բոլոր ախտերը բժշկելու և պէտքերը հոգալու ներկայիս և յաւիտենականութեան համար: «Լուսն զի Աստուած այնպէս սիրեց աշխարհը, մինչեւ Իր Միածին Որդին տուաւ, որպէս զի ամէն ով որ Անոր հաւատայ՝ չկորսուի, հապա յաւիտենական կեանք ունենայ (Յովհ. 3. 16): Ո՛հ, Անոր անպատմելի պարգեւը մի մերժեր, սիրելի ընթերցող, Յիսուս Քրիստոսի ծակուած ձեռքերը տակաւին կ'երկնայ բոլոր մարդոց, զանոնք մեղքի խորունկ տիղմէն և զմարտաւթենէն հանելու և սլբելու ու պատրաստելու և երկինքի թագաւորութեանը ժառանգակից ընելու համար: Սակայն մարդիկ այդ օրհնեալ ձեռքը մէկդի կը հրեն որ Իրենց սրտին գոնեւրը կը զարնէ: Սակայն Ան քիչ ետքը պիտի գայ երկինքի ամպերուն վրայ մեծ փառքով ու զօրութիւնով և սուրբ հրեշտակներով, ամէն աչք Զանդիկայ պիտի տեսնայ և երկրի բոլոր ազգերը կոծ պիտի ընեն Անոր նայելով, բայց Աստուծոյ զաւակները անթիւ և անհամար արդէն երկինքը առնուած պիտի ըլլան: Ահաւասիկ այս է շիտակ պատասխանը հարցումին թէ «մինչո՞ւ հեթանոսները խոսովութիւն կ'ընեն ու ժողովուրդները պարապ բան կը մտածեն, երկրի թագաւորները ու իշխանները Օծեալին գէժ կը խօսին»:

Կայծակի արագութեամբ կը մօտենայ այն անաւոր օրը՝ որ անխուսափելի է. սակայն, դուք սիրելիներ երբ այս բաները կը տեսնէք գլուխնիդ վեր վերցուցէք, քանզի ձեր փրկութիւնը մօտեցած է:

Անգլիէնէնէն քարգլ.

Կ. Յ. ԹՈՒՄԱՆԱՆ

ՀՈԳԻՈՅՆ ԼԻՈՒԹԻՒՆԸ

Գրեց՝ ԻՆՎՈՒՏ

(Գործ. 9. 17)

(Շար. հախորդ թիւէն եւ վերջ)

Ամենայն խոնարհութեամբ հոս կ'ուզեմ վկայութիւն մը տալ, գուցէ անով կարենամ օգնել ոմանց: Աստուած այնպէս աստիճանաբար գիտ որ, ուրիշ թողտուտ մը պզտիկ մանուկի մը նման տպաւորւեցայ Աստուծոյ՝ Սր. Հոգիով լեցուելու համար: Պարզ և հասարակ հաւատքով ընդունեցի այդ պարգեւը, սակայն բան մը ստացած ըլլալս չէի զգար: Ամբողջ օրը տակի չոր վիճակ մը ունէի քան որ իշ ժառանգ, ո՛չ նոր կեանք մը կ'զգայի իմ մէջս, ոչ ալ Աստուծոյ ներկայութեան մէկ աստիճան զգացում մը: Քանի քանի անգամ այն օրը Սատանան ինծի ըսաւ. «Դու Տէրոջը տպաւորում ևս Հոգւոյն լեցունութեան համար, հիմա տես, ի՞նչ չոր վիճակ մը կ'զգաս: Դու յայտ Դու աստիճան կ'զգաս այդ կեանքէն քան երբեք»: Ասիկա ճշմարիտ էր, ուրիշ չէի հասկնալ և եկաւ շարաւրթը և այն օրը շատ երկար թուեցաւ ինծի: Զորութիւնը կը շարունակէր, Աստուծոյ ներկայութեանէն բան մը չէի զգար, փորձիչին յարակուսեցին ալ միշտ աւելի զօրաւոր կ'ըլլային: Սակայն ես բռնած էի զԱստուծոյ և Իր խոստումը, բռնած էի Իր անփոփոխ հաւատարմութիւնը և Իր խօսքը: Միշտ հազար անգամ լուսաւորեցի և Աստուծոյ անփոփոխութեան և հաւատարմութեան վրայ ապաւինիլ քան մեր փոփոխական զգացումներու վրայ: Եկաւ կիրակին, առաւօտեան նոյնպէս չոր ու ցամաք վիճակ մը ունէի, ժողովի

ատեն երբ կը հաղորդէի Տէրօջը պատգամը, սիրտս հանդարտօրէն լեցուեցաւ հաճութեան, հանգստութեան և խաղաղութեան մէկ նոր զգացումով: Այդպէս սկսաւ, և մինչեւ երեկոյեան ժողովը ժամէ ժամ ան ան զգացումը սաստկացաւ և ժողովէն յետոյ անիկա հասաւ իր գագաթնակէտին: Աստուծոյ փութէն յաղթուած՝ խողաղ և սուրբ երկրպագութիւնով մը ինկայ Աստուծոյ ներկայութեան առջեւ: Աստուծոյ իր խոստումը արդէն կատարած էր ուրբաթ օրը, սակայն Ան ուզեց փորձի ենթարկել իր ծառային հաւատքը, և իրեն յարմար սեպած ժամանակը իր հնազանդ և ապաւինող զաւակին զրկեց իր ներկայութեան ան քողցր, սուրբ և երբեք չմոռցուելիք զգացումը:

Նոյնպէս ալ դուն կրնաս նուիրել քու անձդ և ապաւինիլ Տէր Յիսուսի լեցուելու համար ճիշդ այնպէս ինչպէս ապաւինեցար մեղքերու թողութեան համար, առանց զգալու փոփոխութիւն մը: Մտածէ որ այդ ժամանակը դարձակէտ մըն է քեզի համար: Շատ քրիստոնեաներ նուիրուած են Տէրօջը և տպաւինած Անոր երախտի նման Սբ. Հոգիով լեցուելու և նոյն ժամանակ փոփոխութիւն մը չնկատելով, սկսած են իրենց արտերուն նայիլ և ըսել — Սատանան ալ արդէն միշտ պատրաստ է փսխալու — «Անշուշտ ես խաբուած եմ, ասիկա միայն մոլեռանդութիւն մըն է, ես բոլորովին լեցուած չեմ Հոգիով, ես չտա կը կասկածիմ այս մասին»: Վերջապէս մարդ կու գայ այն համոզման որ ինքը խաբուած է, և անդիտակցութեամբ ձգելով Աստուծոյ հաւատարմութեան պարզ կերպով տպաւինելու դրութիւնը՝ կ'իյնայ Սատանային անհաւատութեան ծովակին մէջ: Հարցում է՝ թէ ինչպէս անցնելու է այդ երկար

կամ կարճ ժամանակամիջոցը: — Ոչ թէ վախով կամ երկմտելով թէ արդեօք ունի՞նք Սբ. Հոգին, այլ այն պարզ, յարստեւ, որոշ և յաղթական հաւատքով՝ թէ Աստուծոյ հաւատարիմ է և իր խոստումը կը պահէ: Պէտք է խնդիրը հասնի հոս:

Այս է իմ պատգամը: Հոգւոյն լեցունութիւնը իւրաքանչիւր փրկուած անձի համար է, և եթէ կատարեա պայմանները, ապա Տէրը կու գայ իր տաճարը: Ան կու գայ և քու սիրտդ, էութիւնդ, քու կեանքդ ամենակարող Սբ. Հոգւոյն ներկայութեամբ կը թափանցուի, կը լեցուի, կը յաղթուի և կ'իշխուի:

ՃԵՅԳՐՊ ՆԷՓ

ՄԱՐԴ ՄԸ ՈՐ ԱՅԳ ՄԸ ԱՌԱՋՆՈՐԴԵՑ ԱՍՏՈՒԾՈՑ



Հոգեւոր տաղնապաներու ատեն, Աստուծոյ միշտ ունեցած է իր մարդը լեցուն ճիշդ անհրաժեշտ պատգամով, մարդիկը առաջնորդելու իրեն հանդէպ հաւատքի: Շատ զարմանալի չէ, ուրիմն որ եկեղեցիէն դուրս սկսպտիկութեան և անհաւատութեան բարձրացող հոսանքին, յետոյ Քրիստոսի փրկարար զօրութեան ուրացումին զէմ (որ ԺԹ. դարու սկիզբները կարգ մը կրօնական մտաւորներու մէջ ժողովրդական կը դառնար), Աստուծոյ բազմաթիւ աւետարանիչներ հանեց, որոնց որոտալից վկայութիւնը մեծ թիւով մարդիկը հաւատքի բերու: Ասոնց մէջ յետիններէն չէր էլալըր ձէյզըպ Նէփ, այն Ամերիկացի առաջին աւետարանիչը որ իր ամբողջ ժամանակը յատկացուցած էր սոյն գործին:

Ծնած է 1799 ին Նիւ Եորք քա-

ղաքին մէջ, քրիստոնեայ ծնողքէ մը, մեծցած կրօնական ջերմ մթնոլորտի մը մէջ և կանուխէն համոզում գոյացուցած թէ Աստուծոյ պէտքը թունէր ինքը, Թէեւ յաճախ առանձին աղօթքի և Աստուածաշունչ կարգալու ժամանակ կու տար, սակայն իր մեղքերը կը բարձրանային իր առջեւ լեբան մը պէս, մինչեւ որ օր մը 17 տարեկան հասակին՝ գնաց անտառները մինակը, որոշած՝ չվերադառնալ առանց թողութիւն գտնելու:

Ծանրաբեռնուած յանցապարտութեան զգացումով ծնրադրեց աղօթելու համար, և կ'ըսէ. «Ի մեծ ուրախութիւն իմ հոգւոյս որ առինքնուած էր, այս վիճակի մէջ մի քիչ ժամանակ անցնելէն ետքը, իմ յանցապարտութեան բեռս ոչ եւս էր: Իմ հոգիս կը խաշտար Ներսիսի, և սկսայ երգել օրհնեալ Փրկչիս գովութիւնը»:

Ծառայութեան կը կանչուի.— Նոյնիսկ այսպիսի վճռական փորձառութենէ վերջ Նէփ կը տաքնապէր իր վրիպումներուն և հոգւոյն մէջ զգացած պաղութեան համար, մինչեւ որ գիշեր մը, հին տանները տեղի ունեցող աղօթածողովի մը մէջ, փրկուեց և գաւառ աւելի խորունկ փորձառութիւն մը և ինքզինքը յանձնեց Աստուծոյ ձեռքերուն՝ ծառայութեան համար: Ծուռով հրաւիրուեցաւ իրր աշխարհական ժողովներ վարելու, և շատեր ըսին իրեն թէ Աստուծոյ ձեռքը իր վրան էր պաշտօնին համար: Իր խորունկ փորձառութենէն ետքը իր երկրին եկեղեցիին մէջ արթնութիւն ծայր տալ սկսաւ, գլխաւորաբար այս 19 տարեկան երիտասարդին եռանդուն վկայութեան պատճառաւ, որ հաճոյք կ'զգար իր բարեկամներուն պատմելու Քրիստոսով գտած իր փորձառութեան ուրախութիւնը:

1822 ին, երբ 23 տարեկան էր

Հէմիլթըն աստուածաբանական ճեմարան մտաւ, պատրաստուելու այն գործին որուն համար իր սիրտը այժմ կը վկայէր թէ իրն էր: Դրամը քիչ էր, և քիչեր կը մտահոգուէին իրենց կոչումը իրականութիւն դարձնելու սակայն Նէփ չէր յուսահատեր: Ծանր աշխատանքով, խիստ խնայողութեամբ, փայտ կտրելով, դժուարին գործեր ընելով երեք տարիէն չըջանաւարտ եղաւ և ստանձնեց Դովուլթիւնը Սրբինկֆիլտի, Նիւ Եորքի մէջ, ո'ւր հինգ տարի այս երիտասարդ, ոգեւորեալ քարոզիչը շարժեց գտնուած համայնքը Քրիստոսի համար: Յետոյ փոխադրուեցաւ Նիւ Եորքի Ուոթըրթաուն քաղաքը, ո'ւր եւս երեւելի դարձաւ իբրեւ հոգններ շահող իր ժամանակը կը արամադրէր մասամբ հողագործութեան ինչպէս նաեւ քարոզչութեան այս 8 տարեկրու ընթացքին, և Նէփ դժգոհ էր, կ'զգար կարօտը փրկարար զօրութեան աւելի մեծ արտայայտութեան:

Հրաւեր աւելանալիս կը գործերու.— Ոխալ հասկցուած և հովառակուած իր պաշտօնակիցներու կողմէ իր արտակարգ և զպայացունց մեթոտներուն պատճառաւ, աւետարանիչը վերջ ի վերջոյ առաջնորդուեցաւ ուղղակի հրաւերով մը ամբողջ ժամանակը պահանջող աւետարանչական գործին: Այսպէս 1833 ին հրաժարեցաւ իր հովուական պաշտօնէն, և միայն Աստուծոյ ապաւինելով սկսաւ զատէն ժողովներ արգել ուր որ կար սապարէզ: Հրապտուած իր խոր հնչող համոզումներէն և իր խաղաղիւ պատգամներէն, հաղարուորներ սկսան իմբուիլ իր ժողովներուն, լսելու այս հոգիով լեցուած մարդը և ընդունելու իր քարոզած Քրիստոսը: Առաջին 18 ամիսներուն մէջ որ եղաւ յոգնեցուցիչ և դժուարին, 2000 հոգիներ դար-

ձի եկան, և Աստուած օրհնեց զինքը նման արդիւնքներով իր ամբողջ 40 տարուան աշխատութեան մէջ:

Երբ Նէփ համայնքի մը մէջ կը սկսէր արթնութեան մը, կեանքի բնականոն ընթացքը կ'ընդհատուէր: Առեւտրական տուներ կը գոցուէին, հողագործներ կը դադարեցնէին իրենց գործը, և երեք մղոն ճամբայ կը քալէին օրուան մէջ տեղի ունեցող երեք ժողովներուն ներկայ ըլլալու: Լօւրլի մէջ, Մասաչուսէթ, գործատուներ կը փակուէին, որովհետեւ գործաւորները բռնուած էին մեղքի համոզումէն, որոնցմէ 1500 հոգիներ թողութիւն փնտռեցին:

Աստուծոյ այս հզօր ծառային ազօթալից տաաջնորդութեան ներքեւ, էն ձեւական եկեղեցիներ զարձան ուժի փարոսներ և աղօթքի բերդեր:

Ազգ մը շարժած.— Սոյն ցնցող փորձառութիւնները կրկնուեցան բոլոր ազգին մէջ: Եկեղեցիի մը մէջ որ ծանօթ էր հազուադէպ եռանդի պակասովը, իր ուժեղ քարոզութեամբ և ազօթալից օրինակովը Նէփ յաջողեցաւ յառաջացնել այնպիսի արթնութիւն մը որ մինչեւ իսկ սկսեցաւ լրագրողներ, որոնք եկած էին զուարճանալու, հոն կեցան աղօթելու և Քրիստոսը գտնելու: Ամէն տեղ միեւնոյնն էր, թէ՛ զարգացած Պոթնի մէջ ուր երկու շաբաթ արթնութեանց արշաւներ վարեց և որոնց միջոցին Աստուծոյ Հոգին թափեցաւ ամբողջ քաղաքին վրայ, և թէ յետամնաց և սահմանագլխի քաղաքներու մէջ: Թղթակից մը կը գրէր իր մասին. «Ան տապաւնակեց երկիրը Սէն Լօրէնսէն մինչև Րիչմօնտ և Լուիզիլ, և Մասաչուսէթէն մինչև Գալֆօրնիա ուր այժմ եօթանասունամեայ վեթերան մը գրոհ կու տայ անհաւատութեան ամբողջներուն դէմ երիտասարդի մը աւելնով»:

Իր պատգամը.— Առեւտրանիշին պատգամները շեշտակի էին և հետեւաբար տպաւորիչ: Ծարտասանական կանոններէ զուրկ՝ իր քարոզները կը դատապարտէին մեղքն ու անհաւատութիւնը, և կը հրաւիրէին տպաշխարութեան, Այս ԺԹ. դարու Սիմօն Պետրոսին կրակոտ և հասկնալի քարոզութեան ներքեւ ծաղրողները կը լրջանային, խուժանը կը ցրուէր և իրենց պարագլուխները կը փրկուէին, անհոգը մեղքի համոզման տակ կը հալէր, «անհաւատութիւնը կը գունատէր, և համապարփականութիւնը հոգին կը փչէր»: Նէփ, այսուամենայնիւ, կ'ըսէր թէ ինքը չէր վստահեր իր բոցավառ ոճին և զարտուղութիւններուն, այլ «իմ վստահութիւնս եղած է Աստուծոյ զօրութեան և իր ճշմարտութեան վրայ»:

Մարդը.— Նէփ մէկն էր որուն կեանքը ամբողջովին Աստուծոյ ձեռքերուն մէջ էր: Իր խորունկ անձնական փորձառութենէն ետքը իր ամբողջ կեանքին մէջ տպրեցաւ և շարժեց կորսուած հոգիներու համար առաքելութիւն մը ունեցողի զգացումով և եռանդով:

Նիստ, երբեմն կոչաւ ըլլալու տատիճան, շեշտակի խօսքերով զինքը լսողներուն վրայ խորունկ տպաւորութիւն կը գործէր: Աստուծոյ բարկութեան վրայ իր ահեղ, չանթահարիչ խօսքերը փափկօրէն կը հաւատարակչուէին Անոր սիրոյն և ողորմութեան վրայ խօսած սրտառու պատմութիւններովը: Թէպէտ լուրջ, սակայն շատ մարդոգի էր իր զուարճախօսութեան ձիրքովը, և սուր սրամտութեամբը: Ժողովի մը մէջ, երիտասարդ մը կ'ելլէ, և ուրիշները ինդացնելու համար հանդիսաւոր կերպով կը խնդրէ աղօթք Սատանային համար: Անմիջապէս Նէփ կը յայտա-

րարէ. «Երիտասարդը աղօթք կը պահանջէ իր հօրը համար»:

Նէփին կեանքը կը շարժէր աղօթքով. իր ժողովներուն մէջ միշտ աղօթքի նոր ծնունդ մը տեղի կ'ունենար: Երբ փոքր եկեղեցիի մէջ ո'ւր չկար ծանրաբեռնուիլ, աւետարանիչը թեւադրեց աղօթել: Քանի մը պաղ աղօթքներ ըլլալէն ետքը ինքը սաքի կայնելով աղաղակեց. «Դադրեցուցէ՛ք այս անսիրտ աղօթքները, այսպիսի աղօթքներ պիտի սառեցնէ և մեռցնէ մեզ»: Եկեղեցին զգացուած յանդիմանութենէն սկսաւ մտահոգուիլ, և հզօր արթնութիւն մը տարածուեցաւ տեղւոյն վրայ: Ան երբեք գոհ չէր այն ժողովներէն երբ անոնք համայնքները չեն յեղաշրջէր, սկեպտիկները չեն համոզէր, և անուանական քրիստոնեաները չեն տաքցնէր: Այս սրբազան կրակը շարունակեց այրել փայլուն կերպով մինչեւ 1874, երբ օր մը երկար և պաղաւեր կեանքէն վերջը՝ Տէրը կանչեց զինքը վերը. իր մահէն ետքը պայծէր աւետարանչութեան համար ունեցած իր սէրը աւելի երեւան ելաւ երբ գանուեցաւ թէ իր բոլոր ստացուածքը եկեղեցիին ձգած է այդ նպատակին ծառայելու համար:

ՆԼ Այսօր.— Մարդիկ միշտ նայած են անցեալին կարօտով մը և ըսած. «Մեր ժամանակները ստրբեր են»: 1868 ին, Նէփին վերջին տարին երբեք գրական հանգէս մը կը գրէր. «Այժմ ժամանակները փոխուած են, ոչ մէկ չըջիկ քարոզիչ հաւանական չէ որ յաջողի այսօր թէ՛ եռանդ և թէ՛ հակառակութիւն արթնցնել ինչպէս կ'ընէին անցեալին մէջ»: Բայց երիտասարդ կօշկավաճառի պաշտօնեայ մը Մուտի անունով, կորսուած հոգիներու համար ունեցած իր սիրովը կ'ընէր ճիշդ միեւնոյն բանը: Այսպէս նաեւ այսօր, քանի որ մենք հա-

մոզուած ենք որ մեծ և ցնցող արթնութիւններ անկարելի են, մենք կորսնցուցած ենք զանոնք յառաջ բերող փայլուն հաւատքը: Մարդիկ հիմնովին միեւնոյն են հեռապատկերի, կարիքներու և առանց Աստուծոյ անյուսութեան մէջ ինչպէս էին Նէփի օրերուն: Մեթոդները կրնան փոխուիլ, սակայն այսօրուան կոչը այնպիսի մարդոց համար է որոնք իրենց կեանքերը պիտի դնեն Նէփին և ուրիշներուն կեանքերը չարժող ուժի աղբիւրին վրայ, որոնք նոյնպէս մեր օրերուն ուրիշ համատարած և ցնցող արթնութիւններով մարդիկը պիտի առաջնորդէին Աստուծոյ:

Թարգմ. ԳՐԻԳՈՐ ԹԱՇՃԵԱՆ

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԷՆ

Դ.

ԵՐԱՆՈՍ



(Շար. Յուլիսի քիւէն)

Յետոյ սուրբ նահատակներ իրենց պատիժը կրեցին այնպիսի քաջութեամբ որ հեռու է նկարագրելի ըլլալէ: Սատանան մեծ ճիգ կը թափէր որ անոնց բերնէն հանէ հայհոյալից խօսք մը: Սակայն ամենէն աւելի խուժանին, կատաղարիչին և զինուորներուն բարկութիւնը թափեցաւ Սանկտոսի, Մատիւրոսի, Ասատուրի Բլանդինայի վրայ, որոնց առաջինը Վիէնի մէկ սարկաւազն էր, երկրորդը՝ նորադարձ մը բայց վեհօգիտ խոյիան մը քրիստոնէութեան, երրորդը՝ Պերկամօնցի մը որ համոնուն քաղաքին եկեղեցւոյն սիւնը և նեցուկն էր, իսկ վերջինը՝ սպասուհի մը, որուն միջոցաւ Քրիստոս յայտ-

նեց որ մարդոց միջեւ նուազ յարգ
ու պատիւ վայելողներ, Աստուծով ա-
ւելի արժանի էին յարգ ու պատուի,
Աստուծոյ հանդէպ իրենց ունեցած սի-
րոյն պատճառովը, որ ի յայտ եկած էր
զօրութեամբ և առանց պարծանք մը
ունենալու անոր համար: Որովհետեւ
երբ ամէնքս կը վախնայինք, և մա-
նաւանդ մարմնով իր տիրուէին, որ
նոյնպէս կը զանուէր նահատակուե-
լիքներու մէջ, սարսափի մէջ էր ա-
նոր համար որ մի գուցէ, Բրանդինո՛ւ
իր սպասուէին, իր ֆիզիքական ակա-
րութեան պատճառաւ պէտք եղած
քաջութիւնը չունենայ Յիսուսի ա-
նունը գաւառելու, բայց Բրանդինո
լեցուած էր այնպիսի զօրութեամբ որ
զինքը խոչտանգողներու յաջորդական
խումբեր ուժասլաւ ինկան, պարտը-
ւեցան, այնպէս որ անոնք կ'ընդու-
նէին թէ իրենք յոգնեցան զինքը
չարչարելէ և անկից աւելի լաւ մը
ընելու անկարող են, և թէ կը զար-
մանային թէ նէ սակաւին ողջ կը
մնար — որովհետեւ իր ամբողջ մար-
մինը բզիկ - բզիկ եղած և կտրտուած
էր, որովհետեւ այդ խոչտանգումնե-
րէն որ եւ է մէկ ձեւն իսկ բաւական
էր կեանքին վերջ մը տալու, իսկ նէ
ենթարկուած էր զանազան ձեւերով
տանջանքներու: Նոյն, այդ օրհնեալ
կոյսը, որպէս վեհանձն մարտիկ մը,
այնպէս կը թուէր՝ թէ թարմ ուժ
կ'ստանար Քրիստոսը գաւառելուն
մէջ, իրեն համար «Ես քրիստոնեայ
եմ և մեր մէջը գէշութիւն մը չէ
տեսնուած» խօսքերը աւելական կազ-
դուրիչ նոր ուժ մը, իր ցաւերուն
համար ամօքիչ սպեղանի մըն էին:
Սոսկեղոս իր չարչարանքները կրեց
այնպիսի ձեւով մը որ արտառովոր և
գերմարդկային էր: Երբ ամբարիշտ-
ները կը յուսային թէ խոչտանգումը
չարունակելով և զայն սաստկացնե-

լով պիտի ստիպէին զինքը անպատեհ
բաներ հանելու իր բերնէն, ան պայ-
քարեցաւ անոնց դէմ այնպիսի հա-
տատաժողութեամբ որ չուզեց մինչեւ
իսկ ապ իր անունը, յայտնել իր ազ-
գութիւնը և ո՛ր քաղաքէն ըլլալը, ոչ
ալ յայտնեց թէ գերի՞ էր թէ ազա-
տածին: Բոլոր հարցումներուն ան կը
պատասխանէր լատիներէն «Ես քրիս-
տոնեայ եմ»: Քրիստոնէութիւնը ի-
րեն համար թէ՛ անուն էր թէ՛ քա-
ղաք թէ ցեղ, և միակ պատասխանն
էր ասիկա ամէն հարցումին՝ զոր հե-
թանոսները կը լսէին իր բերնէն:
Կառավարիչը և դահիճները մեծ ջանք
կը թափէին, և վերջապէս երբ ուրիշ
բան չմտաց ընելիք իրեն, մարմնոյն
ամենափափուկ մասերուն վրայ կը
փակցնէին արտաշէկ երկաթ: Իր մար-
մինը կրակէն կտրմբած այս երկաթ-
ներէն արդարեւ կ'այրէր, բայց ինքը
կը մնար հաստատուն առանց տեղի
տալու, զովացած և զօրացած Յիսուս
Քրիստոսէ բխող կենդանի ջուրով: Իր
մարմինը վկայ էր իր վրան կատար-
ուած խժգում արարքին: Անոր ամէն
կողմը խոցեր և վէրքեր էին, պրկուած,
կծկուած վիճակի մէջ և մարդկային
էակի մը ամէն ձեւ կորսնցուցած:
Քրիստոս տառապելով անոր միջոցաւ
իրականացուց իր մեծ փառքը, հնկա-
ռակորդը առ ոչինչ սեպուեցաւ: Ան
եղաւ նաեւ օրինակ մը միւսներուն՝
թէ ոչինչ ահաւոր է, ո՛ւր կայ սէր
Աստուծոյ համար, ամէն ցաւ ոչինչ է՝
ո՛ւր խնդրոյ առարկայ է Յիսուսի
փառքը:

Պատմութիւնը կու տայ մեզի ու-
րիշ բազմաթիւ բարբարոսական ան-
գթութիւններ, որոնց զոհ գացին ան-
մեղ քրիստոնեաներ: Մեզի կը պատ-
մուի անոնց նեատուիլը վայրի գաղտն-
ներուն, կտաղած չուներուն, մոլեգ-
նած ցուլերուն առջեւ, և յետոյ դի-

ւային չարութեամբ անոնց մարմիններուն այրուիլը, և ածխաներուն գետը նետուիլը՝ Որովհետեւ հեթանոսներ իրենց յիմարութեանց մէջ կը խորհէին՝ թէ այդպէս ընելով ի գերեւել հոնեն անոնց յարութեան յոյսը, որուն կը յուսային և այդպէս ալ կը դաւանէին այդ քրիստոնեաները։ Սակայն հալածիչներուն չարութիւնը բանի մը չծառայեց և քրիստոնեաներ վեհօրէն կրեցին բոլոր չարչարանքները, և մինչեւ իսկ անոնց մէջ քոսի մը հոգիներ, որոնք սկիզբները սարսափահար՝ ուրացած էին հաւատքնին, տեսնելով իրենց եղբայրներուն քաջարի կեցումը, իրենց չարչարանքները կրեւրին, կրկին դաւանեցան այն ինչ որ ուրացած էին քիչ առաջ և բամբեցին՝ միւսներուն հետ մարտիրոսացման փառքը։

Պօսինոս, այն ծերունի եպիսկոպոսը, ինքսունէն աւելի տարիներուն բեռը իր ուսերուն վրայ, և մարմինով այնքան տկար որ հոգիւ թէ ոտքի վրայ կրնար կենալ, հակառակ այս բոլորին քաջարոր դաւանեցաւ Քրիստոսը և կոչվոճաման եղաւ։

Բլանդինա կրկին ու կրկին փորձի ենթարկուեցաւ ամենաանհաւոր խոշտանգումներով, ծեծերով, սակայն ոչ մէկ բան կարող էր շարժել զինքը իր հաստատամտութենէն։ Այնպէս կ'երեւար որ, կարծես թէ դահիճներուն բոլոր անգթութիւնները կարող չէին մահ պատճառել իրեն, և նա գրեթէ վերջին զոհն էր որ աւանդեց իր հոգին։

(Վերջը յաջորդով)

Հայեցողական գիտութիւնը նման Բահելի գեղեցիկ է, սակայն ամուլ։ Աստուծոյ խօսքը կոչուած է «Մեր ոսկեւուն հրազ» ոչ մեր լեզուներուն, պարզապէս խօսելու համար, այլ մեր ոսկեւուն, անով փայլելու համար։

ՄԵՐ ՀԱՅ ԵՐԿՍԵՒ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒՆ

ՓՈՔՐԻԿ ԵՐԳՉՈՒՀԻՆ

«Ոչ, ոչ, ես չեմ կրնար ընդունիլ ինչ որ չեմ հասկնար», կ'ըսէր Պր. Բ.-ն իր բարեկամ Հ.-ին, որը քանի մը ժամէ ի վեր կ'աշխատէր իր անհաւատա քարեկամը հաւատքի բերելու, բայց չէր յաջողեր։

Հ.-ն արտաճ հեռացաւ գնաց։ Վեց ամիս էր որ ան ճանչցած էր Աստուծոյ զթողաւտ սէրը և խաղաղութիւն գտած Յիսուսի պատուական արիւնով։ Ան շատ վիշտ կ'զգար իր երիտասարդութեան քարեկամին հոգին վիճակին համար և ամէն պատեհութենէն կ'օգտուէր փրկութեան բարի լուրը անոր լսելի ընելու համար։ Բայց այնպէս կը թուէր որ իր բաւականը օր ըստ օրէ աւելի կը խստանար իր սրտի անհաւատութեան մէջ։ Բայց և այնպէս Հ.-ն չէր կրնար ձգել իր վիճակին, որքան կոպիտ խօսքեր ալ լսէր իր քարեկամէն, դարձեալ կը մօտենար իրեն։ Իր վիրտուորիչ դիրքին հանդէպ կը յայտնէր անխախտ հեղութիւն մը, և չէր ձանձրանար աւնոր համար ուղօթելէ։

Օր մը երկու քարեկամներ պանդոկի մը մէջ միասին կը ճաշէին։ Երբ ճաշը վերջացած էր և իրենք կ'ուզէին մեկնիլ, նախասենեակէն փոքրիկի մը քաղցր երգի ձայնը լսուեցաւ։

— Ինչ մաքուր և զեղեցիկ ձայն է, ըսաւ Բ.-ն։ Բայց այդ րոպէին ծառան կոչուորէն հրամայեց փոքրիկ երգչուհիին որ դադարեցնէ երգը։

— Թողէ՛ք որ փոքրիկը ներս գայ, ըսաւ Բ.-ն, ծառային բարկացած, բանալով սենեակին դուռը։

— Ո՛հ, պատասխանեց ծառան, մեզի սաստիկ պատուէր տրուած է որ այդպիսիները չձգենք ճաշարան: Բայց եթէ կ'ուզէք զինքը լսել գրասենեակին մէջ, անոր գէմ առարկութիւն մը չունիմ:

— Միայն թէ լսենք այդ անուշ ձայնը, տեղը տարբերութիւն չընէր, ըսաւ Բ.-ն իր բարեկամին և միասին գացին ընթերցանութեան սենեակը:

Փոքրիկը հազիւ 12 տարեկան կար: Խեղճ փոքրիկ: Ուսերուն վրայ դրած շալը չէր կտրող ծածկել իր բարակ հանգերձը զոր հագած էր հէք աղջիկը: Իր գունատ գէմքին վրայ կը կարդացուէր քանի՜ տարուան թշուառութիւն ու վիշտ — նեղութիւն ու ցաւի պատկեր մը:

Փոքրիկը հիւանդ կ'երեւի, դիտել տուաւ Բ.-ն կարեկցութեամբ երբ տեսաւ աղջկան գէմքը մաշած, ցաւէն և վշտէն: «Սիրելիս, ի՞նչ երգ կ'ընաս երգել, խնդրեմ դարձեալ երգէ այն գեղեցիկ երգը զոր քիչ առաջ ընդհատեցին»:

Փոքրիկը շալը քաշեց և ձեռքերը դրաւ կուրծքին, և պարզ ու սիրուն ձայնով, որը պատիւ կը բերէր մինչեւ իսկ կրթուած երգչուհիին, երգեց հասարակ երգ մը այն ուրախ և երջանիկ երկրի մասին ո՛ւր Յիսուսը կը տանի իրենները:

Թէ՛ բովանդակութիւնը և թէ սիրուն ոգեւորուած երգեցողութիւնը չափազանց յուզեցին երկու ունկընդիրներն ալ: Փոքրիկը վերջացնելէն ետքը Բ.-ն հարցուց.

— Սիրելիս, ուսկի՞ց սորված ես այս փառաւոր երգը:

— Կիրակնօրեայ դպրոցին մէջ, պատասխանեց փոքրիկը:

— Միթէ կը հաւատա՞ս թէ կայ ուրիշ կեանք մը վերը, կեանք մը լե-

ցուն ուրախութիւնով և երջանկութեամբ:

— Այո՛, պարոն, ես հաստատ գիտեմ, պատասխանեց աղջիկը այնպէս վստահ որ լսողները զարմացած մնացին: «Այնտեղ, վերը աւելի գեղեցիկ երգեր պիտի երգեմ»:

— Պիտի երգե՞ս այնտեղ, տաիկա ո՞վ ըսած է քեզի, հարցուց Բ.-ն:

— Մայրիկս ըսած է, պատասխանեց աղջիկը և տխրեցաւ: Նա ինծի հետ կ'երգէր այս երգը մինչեւ հիւանդանալը: Յետոյ ըսաւ թէ այլեւս իր բերանը չկրնար երգել բայց և այնպէս կ'երգէ և կը գովէ Տէրը իր սրտին մէջ, և շուտով պիտի շարուանակէր երգել երկինքի մէջ իր օրհնութեան երգերը: Ա՛խ, սիրելի մայրիկս առաջ այնպէս ուրախ չէր բայց իր հիւանդանալէն քիչ առաջ մեր տունը եկաւ բարեպաշտ կին մը և խոսեցաւ իրեն Յիսուսի մասին, որ եկած է զմեզմաք մեղաւորները փրկելու: Մայրիկս շատ լացաւ, կ'ըսէր թէ ինքը կորսուած է և փրկիչ չունի: Ես ալ շատ կուլայի և չէի կրնար երգել: Այն կինը մեզի տուաւ Ն. Կառկարան մը, և ես միշտ կը կարդայի անկէ մօրս համար: Անգամ մը կը կարդայի այն համարը որ կ'ըսէր. «Եկէք ինծի, բոլոր յոգնած և քիւնաւորուածներ և ես ձեզ պիտի հանգչեցնեմ»: Եւ յանկարծ մայրս սկսաւ ուրախ և բարձրաձայն օրհնել Տէրը, զիս սեղմեց իր սրտին և ըսաւ թէ իտղաղութիւնը գտած է, որովհետեւ Յիսուս զինքը սիրած և մահէն մեղքերը ներած է: Շատ չանցած այդ գէպքէն մայրս հիւանդացաւ և ես ստիպուած էի պատիւ և երգել կտոր մը հացի համար, որովհետեւ հայրս ալ երկու ամիսէ ի վեր հիւանդ կը պառկէր: Ա՛խ, սիրելի մայրիկս շատ նեղութիւն քաշեց, բայց նա երջանիկ էր, յետոյ Տէրը ա-

ոսւ զինքը այս աշխարհէ, որ օրհնութեան երգեր երգէ երկինքի մէջ Տէրոջը:

Վերջին խօսքերը արտասանած ատեն երկու ձեռքերով ծածկեց երեսը որ չի տեսնեն իր այտերէն վար գլորուող արտասուքի մարգարտանման կաթիլները:

— Բայց, անշուշտ դուն աւելի կը նախընտրես ապրիլ և երգել այստեղ քու երգերդ քան թէ մօրդ հետէն գերեզման իջնել, ըսաւ Պր. Բ.-ն:

— Ո՛չ, ոչ, պատասխանեց փոքրիկը ետանդով, ես կ'ուզեմ ըլլալ այնտեղ ո՛ւր մայրիկս կը գտնուի: Ես արդէն գիտեմ որ չուտով իրեն պիտի հետեւիմ, որովհետեւ ես ալ մօրս պէս կը զգամ կողքիս տակ ցաւ և կը հաղամ: Այնտեղ, վերը այլեւս անօթի չեմ մնար, այնտեղ ամէն ինչ գեղեցիկ է:

— Բայց ուսկի՞ց գիտես անիկա, հարցուց անհուսառ:

— Մայրիկս այդպէս կ'ըսէր:

— Բայց մայրիկդ կրնայ սխալած ըլլալ:

— Սխալած, ո՛չ երբեք: Որովհետեւ ան կարգացած է Աստուծոյ խօսքին մէջ, և Աստուծոյ ոչ մէկ ասեցն սուս կը խօսի:

Այս պարզ խօսքերը արտասանեց աղջիկը այնպիսի նայուածքով մը որ վկայէր իր անխախտ հաւատքին մասին, այնպէ՛ս յուզեց անհաւատին սիրտը որ ան հազիւ կրնար իր զգացումները զսպել: Իր բարեկամը նշմարեց ատիկա, և չտեսնելու զարկաւ:

Յուզուած Պր. Բ.-ն փոքրիկին ձեռքին մէջ զրաւ ոսկի մը: Փոքրիկը չափազանց ուրախ այդ տաա նուէրէն սենեակէն դուրս ելաւ:

«Եկուր երթանք իր ետեւէն, առջարկեց Բ.-ն իրմէ ոչ պակաս յուզուած բարեկամին, ես չափ կը

փափաքեմ մօտէն տեսնել այդ խեղճերուն թշուառութիւնը»:

Ուրախութիւնով համաձայնեցաւ բարեկամը և երկուքն ալ առանց նըշմարուելու փոքրիկէն գացին իր ետեւէն, անցան քաղաքին շատ մը փողոցներէն մինչեւ որ վերջապէս կանգ առին փոքրիկ տան մը զրան տուֆել, ուսկից ներս մտած էր աղջիկը: Ինչ մը մտածելէն ետքը իրենք ալ ներս մտան: Ծծչափելով անցան մութ նըրբանցքէ մը և վերջապէս հասան սենեակ մը, ուր տեսան հիւանդ հայրը յարդի վրայ պառկած: Փոքրիկը նըստած իր առջեւ կը պատմէր հօրը իր գլխէն անցածը զոր հիւանդը մտիկ կ'ընէր լարուած ուշադրութեամբ: Երկու բարեկամներ լսեցին աղջկան վերջին խօսքերը որ կ'ըսէր. «Տե՛ս, հայր, ո՛րքան շատ զրամ ունիմ: Երկու սիրելի պարոններ տուին այդ զրամը ինծի: Այժմ կրնամ գտնէ մէկ անգամ մսէ լուս, անդարար սպուր պատրաստել քեզի համար: Տէր Յիսուս այսօր իմ աղօթքս լսեց»:

(Վերջը յաջորդով)

Հոգեւորականներ լոյսեր կոչուած են, եթէ լոյսը խաւս է ո՛րքան մեծ պիտի բլայ խաւար իրեն հետեւող ժողովուրդին: Թէպէտ բոլոր պատգոհաններ հաւատար փայլունութիւն չունին, այսուամենայնիւ ամենէն պիտի պէտք է բլայ այնքան փայլուն որքան էր այն աստղը որ մոգերը առաջնորդեց Քրիստոսի: Ո՛հ, պարտաւ, ինչու գործ է մարդոց մարմինը սպանցելով պարուս մը հոգալ, ինչպէս կ'ընեն կարգ մը բժիշկներ: Աւելի ինչու գործ է մարմինը սնուցանելու համար մարդոց հոգիները սպանցել, ինչպէս որ կարգ մը բարոյիչներ կ'ընեն: Շատ անգուր բլայլու է այն հաւաքարը որ երբեք չէ ստրկած իր կողմնացոյցը:

Պատուէր կ'ըսէ հիմա ապախարէ: Հրամայեալան եղանակը ապառնի չունի: Աստուծոյ կ'ըսէ. «Այսօր եթէ անոր ձայնին պիտի լսէք»: Սասանան կ'ըսէ. «վաղը»:

ՀԱԳԻԳԻ ՄԵՍԵՐՐԵԹ



Քրիսթիաններըն պիր քիմսէյէ թաղարմ էթտիյի էն ալա աթիյէլէր- տէն պիրի՝ հազիգի վէ աէվամի օլան մէսէրրէի տիրա՝ Հազիգաթէն, միւմի- նին՝ սէմավաթա մուհապպէթլէ մէմ- լու պիր Փէտէրէ մալիք օլմասը, Քրիս- տոս վաշըթասըլլէ հայաթը իւզլրին- տէ միւճիզէվի պիր թարգաւս կիւնա- լար ալֆընա մալիք օլարադ՝ Բուհ- իւլ Գուտս թարաֆընտան հիքմէթլէ իրշատ վէ հըֆը ու հիմայէ օլունմա- սը, հէր շէյլին պիրլիքաէ տնըն խայրը իչիւն իչլէմէսի հազիգաթը, սօնսուղ տարար զարֆընտա քետմիլ սա՛տաէ- թէ նաիլ օլարադ էպէտի պիր մէսքէ- նէ սէֆէր էտէճէք օլտուղու զանո՛ւ- թը, սաիր հիչ պիր տիւնեա աաէմի- նին մալիք օլամասըլը մէսէրրէթէ մալիք էտէրէք՝ տնըն ճանընը մէսէր- րէթպաիչ նաղմէլէրլէ տօլտուրուր։ Միւմինին մէսէրրէթի քէնաի էթրա- ֆընտա պուլունտն շէյլէրտէն զիյաաէ տնըն աէրունինաէ պուլունտն շէյլէրէ պաղըլը տըր, շէյլէ քի, հէր հանկը պիր մուհիթաէ վէ ահվալտա մէսուտ օլա- պիրլիր։ Եօգսուլլուգաւ վէ զարուրէթ- տէ Պօղոս առաքեալըն «Տաիմա մէս- րուր օլունուղ», պույսըրաղը կիպի մէսրուր օլուր։ Հէր տիւրլիւ մուգա- յաղալարաւ պիլէ սէմավի ահէնկ գալպինաէ աէվամ էտէր։ Լաքին պա՛- տըլը միւմինլէրաէ էօյլէ կէօրիւնիւյօր քի, զանն էտէրսին քրիսթիանըլ քէնաիլէրի պէտպալթ էտիյօրմուշ- ճաւընա տարգ եիւզ վէ մէյուս պիր սիմա կէօսթէրիյօրլար, իչթէ պու կի- պի քիմսէլէր խարիճէ հանըլը թէ- սալվուր վէրմէքլիք թէօհմէթիյլէ մահքիւմ տիրլէր։ Պէօյլէ պիր միւմին պէնդէտիլէ պիրլիր էօյլէ պիր էվլատա

քի, միւշֆիգ վէ մուհապպէթլի էպէ- վէյնէ մալիք օլտուղու հալտէ, հէրքէ- սէ տնլէր քէնաիսի իլէ Ֆէնա մուա- մէլէ էտիյօրլար կիպի զանն էթտիրիւր։

Զօգ աճըլը տըր քի չօգ միւմին թէսմիյէ օլունտնլար քէնաի մէսէր- րէթլինի տէրունի օլան նէսնէլէրաէ տրալաճադ եէրինէ տիւնեալիլէր կի- պի խարիճի թէպէտտիւլաթլարաւ, ճէսէտէ ճաղիպէլի օլան՝ հանի կէօզէ խօշ կէօրիւնէն վէ գուլաղա թաթը կէլէն շէյլէրաէ տրամագաւ տըրլար։ Պու կիպիլէր իչիւն Ալլահն քէլլամը, «Ալլահը սէվմէքաէն զիյաաէ զէվզ ու սէֆա սէվէրլէր» աիյօր։ Պու ահվալ հայաթաւ տիւշիւշ իմա էտէր։ Միւ- մինին հայաթը ճէսէտ իչիւն եաշա- մաղըլը օլմայըլ՝ իլլա բուհանի օլունա՝ Բուհտա եաշամաղըլը տըր։ Պու հա- յաթ օլ գաւաւար ալի վէ մուգաւաէն տիր քի՝ միւմին տիւնեալի էյլէնճէ- լէրաէն վէ էյլէնճէ մահալլարընտան տէյիլ սալթ խօշլանմադ, իլլա տնլէր- տէն նէֆրէթ էտէրէք, օ կիպի եէր- լէրաէ բուհու սըգըլըլ պէնաի քէն- աիւնի պիր զընտանաա կիպի հիսս էտէր։

Վար պա՛սըլ էյլէնճէլէր քի չօգ- լար տնլէրաէն քէյֆ հիսս էտէրլէր, պունլար հատար զաթընաա զարուր- սըլ օլտուլլարը հալտէ, տնլէրին վէր- տիյի հանըլը զիւիւմ սէպէպիյլէ իհ- թիրաղ օլունմալը տըրլար։ Մէսէլա, թալլու, աոմինօ, եախօտ քեաղըա օ- յունլարը։ Պունլար պիր մանաաւ էյ- լէնճէլի վէ զարաւսըլ օլտուղլարը հալտէ պիլէ, պիր միւմինէ եաղըլմադ։ Պօղոս առաքեալըն եախօտ ներսէս Շնորհալինին թալլու օյնամալարընը խալալ էտէպիլիլ ըմիսինիզ։ Զարար- սըլ չօգ շէյլէր վար տըրլար, լաքին հազիգի պիր միւմին քէնաի գըյմէթլի վաղթընը օ կիպի Փանի շէյլէրէ սարֆ էտէմէզ։ Սաիր պիր շէյ, սէնին զա-

րարսըզ աստ էթտիյին պիր շէյ պաշ-
գա պիր շախս թարաֆընասն զարար-
լը աստ օլունապիրիւ, վէ օնտան տօ-
լայը գապիլ քի պաշգալարըն թէօքէ-
զիմէլէրինէ պախ օլապիրիւսին: Սէն
օլ քիմսէլէրի ճահիլ թէսմիյէ էտէպի-
լիրսին, լաքին Պօղոս նէ՞ տէյօր «Թա-
մ պիրատէրիմէ թէօքէզ օլուր իսէ,
պիրատէրիմէ թէօքէզ օլմայայըմ տէ-
յու իյէլ էպէտ էթ հէմէյէճէյիմ»:

Պա՛ազը տէֆալար իթիրազ օլու-
նարագ տէնիլիր քի, Բապպըմըզ աստ-
իսի զիյաֆէթ վէ տիւլիւնէրէ կիթ-
մէ՞զմի խիւ Լաքին տիւլիւնէպիրի՞ր-
միսին քի Յիսուս օրատա պուլունան-
լարըն շէրիբ ամէլլէրինէ իշթիրազ
էթմէք իշիւն կիտէր իտի, խայր, իլ-
լա օրատա ճանլար գազանմագ իշիւն:
Սէն, պուլունմագլըզըն լազըմ օլմա-
տըզը մահալլարա նէ՞ մագսէտ իշիւն
կիտիյօրսուն, Բրիստոսու. շէհատէթ
էթմէք իշիւն մի, հօգսա ֆանի օլան
ճէսէտի քէյֆլէնտիրմէք իշիւն մի:
Պիր կէնճ զըզ քրիսթիան օլտուղու
հալտա ճանսա կիտէպիրիլ օլտուղու-
նու իտտիա էտիյօր: Կիւնիւն պիրին-
տէ պալտա պէրապէր ճանս էթտիյի
կէնճէ՞ «Սէն քրիսթիան մըսըն» տէ-
յու սիւալ էտիյօր, կէնճ պուլուն իւ-
զէրինէ չօք թէսճճիւլ էտէրէք, զըզա
«հօգսա սէն քրիսթիան մըսըն» տէ-
յու սիւալ էթտիյինտէ, զըզըն «էվ-
վէթ» տէմէսի իւզէրինէ, կէնճ, «ժլ-
լա՛ըն խաթը իշիւն, պուրատա սէ-
նին իշին նէ՞» տէյօր:

Զօգլար սինէմայա կէթմէքտէ պիր
մագարրաթ կէօրմէյօրլար Լաքին
թէճրիւպէ իլէ կէօրիւլիւյօր քի,
տիւնհատա վուզու պուլան սըրգաթ-
լարըն, գաթիլլէրին, տիւլագսըզլըզլա-
րըն, ֆամիլիալարըն խարապիյէթինին,
կէնճլէրին ճէհէննէմէ գատար էնմէլէ-
լէրինին վէ հէր նէվ ֆէնալըզլարըն
սէպէպի էվվէլի սինէմա տըր: Սինէ-

մանըն պի փէրլա, ֆիքրի մուրտար
էտէն, շէհվէթի ույանաըրուն աչըզ
թատվիրլէրէ պիր միւմին սէյր էտէ-
րէք նա՛սըլ բուհանի հայաթը հաշայա
պիրիլ, էօյլէ պիր հէրտէ քի Բրիստոս
վէ գուտսիյէթ թահգիր վէ բէտա օ-
լունուր:

Էվվէթ, մէսէրրէթ վէ քէյֆ իշիւն
տիւնհա խարիճի շէյլէր, Սոգոմ վէ
Գոմոր մուհիթի արար, լաքին միւմի-
նին մէսէրրէթի վէ քէյֆի տախիլաէն
գալիայան պիր շէյտիր քի անըն տէ-
րունինտէ սաքին օլան հէր էյի նիմէ-
թին փունարը Բրիստոստան սիրուր
էտէր: Հազիգի պիր միւմինին մէսէր-
րէթի Ալլահըն Բէլամընըն միւթէլա՛
ասընտա տըր սահիպի մէզմուր կիպի,
Ալլահըն իրատէթինին իճրա՛թընտա
տըր, էֆէնտիմիլին էօմիլինտէ օլտու-
ղու կիպի, տուա վասըթասըլլէ Ալլահ
իլէ տլագտա տըր, սաիր մուգատ-
տէսլէրին հայաթընտա կէօրիւլալիլ
կիպի:

Է՛յ տօսթում, սէն հազիգի մէսէր-
րէթէ վէ իգնտիյէթէ մալիք օլմա՛շ-
մուսուն, հօգսա տիւնհատա մը արա-
յօրսուն: Նաֆիլէ չալըշմա, կէլ Յի-
սուսա, Օ ճիւմլէ արգուլարընը իգնա
էտէրէք քեամիլ մէսէրրէթ իհսան
էյլէր:

Վեր. ԹԷՈՏՈՐ Ե. ՏԱՂԼԵԱՆ

ԹԷՎՊԷԲԵԱՐԸՆ ՖԷՐԵԱՏԸ

○○○○○○

«Էգիլմիս գամբը գրմայանագ, վէ
քիւթէն ժիթիլի սէօնիւրլէյէնէֆ սիր»:

ԵՍՍ. 42. 3

Պիքիւն հօմրիւմ Մարա սուլու,
Հիսս հեքիմ հեք աճ պուճու,
Տօլու սր գալպիմսէ կիւնան,
Նա՛սըլ աֆլըզ պուլսամ Ալլահ:

Գարա պուլուք երաժրմա,
Կիւնահ վե մեւթ արասընա,
Գարարմագսա սր ցեսեհմ,
Էգիլմեհսե հեմսե գալպիմ:

Կիւնահ սաիմ եյլեր պեհի,
Պու սիւնեասա հենամ սեհի,
Գուրբուլամամ պունսան պեհ ահ,
Զիւն գարեթ սր սանա, Ալլահ:

Պու հալ նաւսըլ խիթամ պուլուր,
Կիւնահ պեհսեհ հեմ սեժ օլուր.
Շեյրան վե մեւթ մաղլուպ օլսա,
Ֆասիս գալպիմ բահաթ պուլսա:

Պիլիւրիմ, չօգ սր կիւնահրմ,
Գալպիմ Յիսուսա սունայրմ,
Անա կիսեհ հիշ պօս սեօնմեդ,
Թիւթեհ Ֆիթիլ աւլա սեօնմեդ:

Պեհ քեհսիմի, շեժիգ Յիսուս,
Սունահաղլմ սանա մախսուս,
Թեհմիլ երյգա կիւնահրմ,
Ճեսեհիմի հեմ ճանրմ:

Լայրգ սեյիլիմ լուրժունա,
Սալք կիւլեհսիմ փափ գանրնա,
Էյլեր պեհի գարսան պեյուզ,
Բուհրմ սօնրա հիշ գարարմազ:

Գանրնա սր ասըլ զուլվեթ,
Ճանսան եթիմ Սանա հիւրմեթ.
Պիւ միւնրիւմ իմ կեւթիմ Սանա,
Շեժգաթ եյլ Յիսուս պանա:

Սեհ քեհսիմի, Շեժիգ Յիսուս,
Գուրպան եթիմ պանա մախսուս,
Գողգոթանրն քեփեհսիմեհ,
Մեկուն խաչըն իւզերիմեհ:

Իթե օրսան ազան զանսան,
Խեյլաւ պուլսուլ կիւնահրմսան,
Սեհ սախի կեյ, է՛յ կիւնահեհար,
Տաւկեթ եհեր, Բապալ Խեյլաւեհար:

Ե. Յ. ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ

ԱԼԹՈՒՆ ՈՒՓԱՂԸ

ՏՕՍԹԱՆԷ ԹԷԼԳԻՆԱԹ

5. Տու՛ա. — Օ՛հ, քեաշքի սէն
տու՛անըն նէ իտիյինի պիլէ իտին,
քեաշքի Ալլահ տնճադ սանա տու՛այը
սէվմէք լութֆունու վերէ իտի ճա-
նընտա նա՛սըլ պիր սէլամէթ, գալ-
պինտէ նասըլ պիր մուհապպէթ իզ-
հար էտիլէճէք: Չէհրէնտէ նա՛սըլ պիր
մէսէրրէթ փարլայաճադ իտի, կէօզ-
լէրինտէն սիրիշք տէօթիւտիւյի գէ-
ման տա պիլէ:

Տու՛ա, տուտազլարտան սիրուր
էտէն իւք Ֆէրհատ՝ Ալլահա պէյանէ-
տէր քի պիրիսի Բէնտի իլէ սէօլէմէք
իսթէյօր, վէ Ալլահ տինլէմէք իչիւն,
օ գաւտար քէրիմ վէ բահիմ Զաթ
(պիւթիւն հիւրմէթ իլէ տէյօրուզ)
սատըգ պիր խըամէթճի կիպի տազիգ
տիր: Օ ճանա Բէնտի քէնտինի իզ-
հար էտէր թարիֆ օլունմազ մուհապ-
պէթ իլէ վէ տէր. «Պանա պազ, պէնի
չաղըրարն, պէնտէն նէ՛ արզու էտի-
յօրսուն»:

Տու՛ա երմեհ, տու՛ա տէվամ էթ-
տիքճէ, տու՛ամըզըն մատտէսի հէր նէ
տէ օլսա, Ալլահըն հուզուրընտա Անը
տալա օռանարըամայըզ էմիլյէթիլյէ
տուրմազ տըր, պա՛ռազէն սէօզսիզ, քէ-
լամսըզ Անըն հուզուրընտա պէքլէ-
մէք տիր:

Տու՛ա երմեհ, Ալլահա տօղրու իճ-
րա էտիլէն պիր ամէլ տիր, չօճուզըն
վալիաէսինէ տօղրու, ֆազիրին՝ քէն-
տինէ հարաթմ էթմէյէ խահիշքեար օ-
լան զէնկինէ տօղրու, մուհապպէթ
կէօսթէրմէք իսթէյէն Ֆէրտին քէնտի
տօթունա տօղրու իճրա իթտիյի տ-
մէլ կիպի:

Տու՛ա պիլ ճիւմլէ սէմալի խաղի-

նելերին անախթարը տըր, անըն վա-
սըթասըյլէ Իւահի մէսէրըթէ, գուվ-
վէթէ, մէրհամէթ վէ լուծֆո նուֆուզ
էտէրիզ, պիզ քէնսիմիզէ վէ րէֆանը
հալըմըզա լազըմ օլան հէր շէյի էթ-
րաֆտան գապուլ էտէրիզ, պիլա ճէհա
սիւնկեարըն ովկիանոստան լազըմ օ-
լան սուլու էմարիյի կիպի Պու մէսէր-
րէթ, գուվվէթ, ինայէթ վէ լուծֆ
պիզիմ մալըմըզ օլուր:

Օհ, էվվէթ էյէր նասըլ տու'ա
էթմէյի պիլսէ իտին, վէ անը սէվսէ
իտին էօմրիւն նէ գատար էյի, ֆաի-
տէլի, մէյվէտար օլաճազ իտի Տու'ա
կիպի հիչ պիր շէյ ինսանըն ճանընը
իւա էթմէզ:

Ալլահ պէօյլէճէ ճանա թէնէզզիւլ
էտիպ անը Բէնտի իլէ պիր նուր վէ
մուհապպէթ ախյարլարընա թէրֆի է-
տէր, վէ պատէհու աուանըն խիթա-
մընաա ճան կէրի քէնտի վազիֆէլէ-
րինէ տէօնէր, ֆազաթ զիյատէ միւ-
նէվլէր ֆիթը, զիյատէ կէրմի պիր Է-
րատէթէ մայիք օլարազ ովսէթ է-
տէր Օ իլահի շաշաա իլէ միմլու օլ-
մուշ օլուր, վէ քէնտի ֆ, զլասընսան
հէր հաղլաշանըն իւզէրինէ անը աքս
էտէր:

Էյէր քէնտի մէչպինտէ թազտիս
էտէն պիր մուվաֆֆադիյէթ իլէ մու-
վաֆֆազ օլմազ իսթէյօր իսէն, մէչզէ
պաշլամազտան տու'ա եր: Տիկէրլէր Է-
լէ օլան ոլազտանա միւլէստէր օլմազ
իսթէյօր իսէն, ոլազաաան էվվէլ
տու'ա էթ: Տու'ա գատար հիչ պիր շէյ
էօմրիւ թաթլըլանաըրմիզ, անը գո-
լալաթմազ:

Մախֆի տու'ա վար, վէ պու
մախֆի տու'ա վուզու պուլուր նէ
զէման ճան հէր շէյաէն վէ հէր քէստէն
այրըլըպ Ալլահ իլէ հալընըզ գալըր
վէ Ալլահա աղըրու չէթիմէք օլուր
իսէ: Մախֆիտէ օլան մի թէլու'ա շու

տըր:— «Ալլահ վէ պէն»: Ալլահ սէվ-
մէք իչիւն տուրույօր, պէն իսէ Անը
թազիզ, թէպճիլ էթմէք վէ Անա սէճ-
տէ գըլմազ իչիւն տուրույօրու: Օ
վէրմէք իչիւն, պէն միւլէվազըննէ
գապուլ էթմէք իչիւն, իգրար, թա-
լէպ, իւմիւտ վէ թէսլիմ էթմէք իւզ-
րէ տուրույօրու:

Իքթիհաս տու'ասը վար, քի իքի
տօսթլար մուգատտէս տօսթլըզ իլէ
հէթտիկէրի իլէ պաղլանըն օլարազ
անլէրին արզու վէ մագսէտլէրի պիր
աիր, վէ պու պիրլիլէ քէնտի քէն-
տիլէրինէ Ալլահա թազտիմ էտէրէք,
«Պիզէ մէրհամէթ էյլէ» տէյի ֆէրհատ
էտլըլէր: Իքի գալպլէրին թազտիմ
էթտիլէրի տու'ա վար, անլէր մէսա-
ֆէ իլէ հէթտիկէրլէրինտէն այրը արր-
լար, ֆազաթ այնի սա'աթտա վէ մա-
նտաա տու'ա էտէրլէր: Այրըլըզ իլէ
գալպլէրի տէրտի օլան պու քիմսէ-
լէրին պու տու'ալարը անլէրի թաի-
ֆիֆ վէ թէսլիլէ էտէր վէ Ալլահն
հուզուրընաա ախի Բուհ իւլ Կուսս
վասըթտըյլէ թազվիլէ էտիլիլէր,
վէ հէր պիրինի քէնտի տաիրէօինտէ
սէմայա աղըրու քէնտի հօլճուլըզա-
րընաա իհա էտէր:

Անտէն սօնրա ալէհի տու'ա վար,
պու Ալլահն հուզուրընըն հազըր օլ-
մասը իչիւն Ալլահն խուսուսի վա'աը
օլան տու'ա տըր: Պու տու'ա գաիֆ
կիւնաքիար ճան իչիւն թէսէլի սէ-
պէպի աիր, չիւնքի կէրչէքտէն ֆէր-
հատ էտիպ տէր: «Տու'ա», աիկէրլէ-
րին տու'ասըյլէ Ալլահն հուզուրընա
չըգարի:

Օհ, քիւշքի նասըլ տու'ա էթմէ-
յի պիլէ իտին վէ անը սէվէ իտին,
էօմրիւն նէ գատար մլսուտ վէ մէյվէ-
տար օլաճազ իտի:

ԽԵԼԱԴՐԱՆՔ ՄԸ

Սկսեմք որ քերք կամ քերքեր կը կարդան, ունին իրենց մասնախումբիւնները: Խօսքը մասնաւորեալ մեր քերքին, ըստ մեզի հասած տեղեկութիւններուն՝ ունի մեծահասակ առաջ կը կարդան «Զանազան Լուրեր»-ը բաժինը, ունի՝ կը հետաքրքրուին առաջնորդող յօդուածներով, ունի՝ կը սիրեն «Հարց Պատասխան»-ի մասը, իսկ աւելի ուրիշներ՝ Պատասխաններու սխալները կը նախընտրեն: Շատեր կը գնահատեն «Երեք»-ին ժամկէտէն յօդուածները: Անշուշտ կան սկիզբէն մինչեւ վերջը զանազան կարդացողներ: Խօսքը չենք ընել անոնց որոնք հարեւանցի սկսեալ մը նստին ետքը մեկ կողմ կը նստեն քերքը, այլեւս չբանալու համար զայն, կ'աղաւանդեն այդպիսիներուն: Իրականութիւնը այն է՝ որ մեր մեջը ընթացանքներուն ժամկէտը (յոժարաւարտութիւն) նկատող շատ քիչ: Մենք աւելի քան մը տարւոյ չենք ուզել այն զաղայիսը զայն քիչ ո՛ր է եւ զանգուս մը ունինք մեր ընթերցողներէն որոշ դասակարգի մը հասցին, ոչ: Այլ կ'ուզենք մի քիչ աւելի մեղք կարդալու եւ շատ քան կարդալու: Լօրս Պէյքըն կ'ըսէ. «Կարդալով մարդ կ'ըլլայ շեղու, խօսելով՝ պատաս, գրելով՝ ճշգրիտ»:

Այս բիւլետեն մէջ մի՛ մոռնար կարդալու երանոսի պատմութեան մէջ անշուշտ չարարանքները հիմաւորց տխուհեմներուն, որոնց մէջ Բլանդինա գերի աղջիկը մասնաւոր տեղ կը գրաւէ: Պէտք չէ զանց ընել, Փոքրիկ երգչուհին:

“ՔՐԻՍՏՈՍ ՄԵՐ ՄԻՋՆՈՐԴԸ”

304 ԷՁ

Դիւն 10 Ե.Դ., Սուրիա՝ 10 Յրանք, Ամերիկա՝ 75 Սենթ

Սոյն հոգեշունչ գիրքին համար դիմել հեղինակին՝

Rev. THEODORE Y. DAGHLIAN

Armenian Evangelical Church

American Mission Building — CAIRO, Egypt.

ՔԵՐՔԻՍ ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆՆ Է

Եգիպտոս՝ 25 Ե.Դ.

Ամերիկա՝ 1 ½ Տոլար

Յրանք եւ Սուրիա՝ 30 Յրանք

Դիմողի ունենալով մեր հայրենակիցներէն ուսման նիւթական տնտեսական վիճակը, յօժար եւ՛ք այդպիսիներուն գեղջեալ գնով մը դիմել քերքը, եթէ առ այդ մեզի իմացնեն մեծամօր կամ մեր գործակալին միջոցաւ:

ՈՒՇԱԿՈՒԹԻՒՆ. — Բոլոր դրամական առաքումներ, յօդուածներ եւ քրթակցութիւններ պէտք է հասցեագրուին հետեւեալ կերպով.—

K. T. SARIAN

2, Rue Ahmed Pacha Hasanen — Shoubra, CAIRO (Egypt).